ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան

2. Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան (Թբիլիսի, գ.Գանձա)
2025 թվականի հուլիսի 11-12-ը:

3. Հրավիրող կողմը

- Վրաստանի մշակույթի նախարար Թինաթին Ռուխաձե,
- «Ջավախքին աջակցություն» հիմնադրամ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Երկկողմ հանդիպումների ձևաչափով քննարկել կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում Վրաստանի հետ համագործակցության զարգացման հնարավորությունները, ինչպես նաև մասնակցել Գանձա գյուղում «Տերյանական օր» ամենամյա տոնակատարությունների շրջանակներում Վահան Տերյանի տուն-թանգարանի պաշտոնական բացման արարողությունը:

5. Քննարկված թեմաները

- հանրակրթության և մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառներում փորձի փոխանակում,
- միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև փոխհամագործակցային հարաբերությունների զարգացման հնարավորություններ,
- դասախոսների, հետազոտողների, ուսանողների և գիտնականների փոխանակման ծրագրերի, համատեղ համաժողովների, աշխատաժողովների և թեմատիկ քննարկումների կազմակերպում,
- գիտության ոլորտում համատեղ կրթագիտական ծրագրերի իրականացում, այդ թվում՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում,
- երկու երկրների միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև Erasmus ծրագրով համատեղ ծրագրային նախաձեռնությունների իրականացում, քոլեջների միջև համագործակցության զարգացում՝ հատկապես շինարարություն մասնագիտությամբ,

- միջպետական կրթաթոշակային ծրագրի իրականացում,

- կրթության, գիտության և երիտասարդության քաղաքականության բնագավառներում համատեղ ծրագրերի իրականացում,

- Հայաստանի և Վրաստանի երիտասարդների մասնակցությամբ ամենամյա ձևաչափով հանդիպումների կազմակերպում,

- մշակույթի ոլորտում համատեղ ծրագրերի ընդլայնման հնարավորություններ,

- Գանձա գյուղում Վահան Տերյանի տուն-թանգարանի վերաբացում,

- երկու երկրների մշակութային հաստատությունների և կազմակերպությունների միջև տեղեկությունների և մասնագետների փոխանակում, ինչպես նաև գրականության, թատրոնի, կինեմատոգրաֆիայի, երաժշտության, կերպարվեստի, թանգարանների, գրադարանային գործի, հրատարակչության, հուշարձանների և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության բնագավառներում համագործակցություն,

- փոխադարձ մշակութային միջոցառումների կազմակերպում՝ երաժշտական, ֆիլմերի, պարարվեստի և թատերական փառատոների, մրցույթների և աշխատաժողովների կազմակերպմամբ,

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների իրավասության ներքո գտնվող հարցերի, «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի, ինչպես նաև Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի շրջանակում համագործակցություն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակում՝ հանդիպել եմ Վրաստանի կրթության, գիտության, և երիտասարդության նախարար Գիվի Միքանազեին և Վրաստանի մշակույթի նախարար Թինաթին Ռուխաձեին:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանն ուղղված մի շարք հարցեր:

Վրաստանի մշակույթի նախարարի հետ հանդիպման ընթացքում կարևորվել են երկու պետություններում կազմակերպվող մշակութային միջոցառումները, որոնց շրջանակում 2025 թվականի հունիսի 5-7-ը Հայաստանում կայացան Վրաստանի մշակույթի օրերը: Դիտարկվել է նաև 2026 թվականին Վրաստանում Հայաստանի մշակույթի օրեր անցկացնելու հնարավորությունը:

Առանձնահատուկ ընդգծվել է հուլիսի 12-ին Գանձա գյուղում Վահան Տերյանի տուն-թանգարանի վերաբացման կարևորությունը՝ շեշտելով, որ բացման արարողությանը մշակույթի ոլորտը համակարգող երկու նախարարների համատեղ մասնակցությունը Հայաստան-Վրաստան մշակութային կապերի ամրապնդման խթան կհանդիսանա:

Քննարկվել են նաև «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի մշակույթի նախարարության միջև մշակույթի ոլորտում 2025-2027 թվականների համագործակցության մասին» ծրագրի շրջանակում իրականացվող համատեղ ծրագրերը:

Հանդիպմանը կարևորվել են համատեղ ցուցահանդեսներ, համերգային ծրագրեր կազմակերպելու հեռանկարները՝ համապատասխանաբար թանգարանների և համերգային կազմակերպությունների միջև համագործակցությամբ: Այս համատեքստում կարևորվել են միջթանգարանային համագործակցության խթանումն ու ոլորտի զարգացումը:

Հանդիպել եմ նաև Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարար Գիվի Միքանաձեի հետ: Շնորհավորելով գործընկերոջը Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարարի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ՝ վստահություն եմ հայտնել, որ Գիվի Միքանաձեի գործունեության արդյունքում կրթության, գիտության և երիտասարդության ոլորտներում երկկողմ հարաբերությունները կամրապնդվեն շարունակական զարգացման օրակարգով: Հանդիպման ընթացքում առաջարկվել է զարգացնել և ընդլայնել կրթության, գիտության և երիտասարդության քաղաքականության բնագավառներում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները: Վրաստանի նախարարը տեղեկացվել է, որ Թբիլիսի այցի ճանապարհին հանդիպել եմ Հայաստանի և Վրաստանի երիտասարդներին, որոնք այդ օրերին հավաքի են մասնակցել ՀՀ երիտասարդական մայրաքաղաք Ապարանում: Հանդիպմանն ընդգծել եմ՝ Ապարանում անցկացվող հավաքի շրջանակում վրացի երիտասարդները հետաքրքրվել են Հայաստանում տարաբնույթ նախաձեռնությունների մասնակցելու հնարավորությամբ: Երիտասարդական հավաքների և ֆորումների անցկացումը կողմերը կարևորել են նմանօրինակ կրթաթոշակային ծրագրերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համատեքստում:

Ողջունելով երիտասարդական համաժողովի անցկացումը՝ Գ. Միքանաձեն ընդգծել է վերջինիս ամենամյա ձևաչափով անցկացնելու հնարավորությունն ու կարևորությունը՝ հայ և վրացի երիտասարդների միջև հաղորդակցման, գիտելիքների ու փորձի փոխանակման, ինչպես նաև համատեղ նախաձեռնությունների իրականացման նպատակով: Վրացական կողմի հրավերով Հայաստանի 25 երիտասարդներ օգոստոսի 8-12-ը նաև ամառային ճամբարի կմասնակցեն Անակլիայում:

Առաջարկվել է դիտարկել երկու երկրների միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև Erasmus ծրագրով համատեղ ծրագրային նախաձեռնություններ իրականացնելու հնարավորությունները, ինչպես նաև քոլեջների միջև համագործակցությունը՝ հատկապես շինարարություն մասնագիտությամբ:

Քննարկվել է նաև միջպետական կրթաթոշակային ծրագիրը, որի շրջանակում ՀՀ քաղաքացիները հնարավորություն են ստանում բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանի բուհերում, իսկ Վրաստանի քաղաքացիները՝ Հայաստանի բուհերում: Կարևորվել է նաև այդ կրթաթոշակային տեղերի հատկացումը երկու պետությունների բուհերում հայագիտություն և վրացագիտություն ուսումնառելու համար:

Հանդիպմանը կարևորվել է նաև գիտության ոլորտում համատեղ կրթագիտական ծրագրերի իրականացումը, որը հնարավոր է դիտարկել նաև «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակում:

Միջբուհական համագործակցության շրջանակում առաջարկել է դիտարկել ուսանողների, դասավանդողների և հետազոտողների փոխանակման ծրագրեր, ինչպես նաև համատեղ հետազոտական նախաձեռնություններ իրականացնելու հնարավորությունը: Հանդիպմանը անդրադարձ է կատարվել նաև «Ակադեմիական քաղաք» ռազմավարական նախաձեռնությանը:

Քննարկել են նաև հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև փոխհամագործակցային հարաբերությունների զարգացման հնարավորությունը:

Գ. Միքանաձեն հայտնել է բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների մասին, որի շրջանակում մինչև 2028 թվականը նախատեսվում են մի շարք միջոցառումների իրականացում: Հանդիպմանը ներկայացրել եմ նաև Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում իրականացվող բարեփոխումների մասին, մասնավորապես՝ Վրաստանի նախարարը տեղեկացվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի մասին, որն առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից, իսկ աշնանը նախատեսվում է երկրորդ ընթերցմամաբ նշյալ օրենքի ընդունումը: Հանդիպմանը կարևորվեց նշյալ բնագավառում փորձի փոխանակումը երկու նախարարությունների միջև:

Այցեր են կազմակերպվել նաև Վրաստանի ազգային թանգարան, ինչպես նաև Թբիլիսիի հայկական պանթեոն, որտեղ ծաղիկներ եմ խոնարհել հայ մեծանուն գրողների և հասարակական գործիչների շիրիմներին:

Այցելել եմ նաև Գանձա գյուղ, որտեղ մասնակցել եմ «Տերյանական օր» ամենամյա տոնակատարությունների շրջանակներում Վահան Տերյանի տուն-թանգարանի պաշտոնական բացման արարողությանը: Տուն-թանգարանի վերաբացման արարողությանը հանդես եմ եկել ելույթով և նշել, որ վերաբացված տուն-թանգարանը ոչ միայն պատմամշակութային նշանակության կառույց է, այլև խորհրդանշական վայր, որն իր միջավայրում ամփոփում է համատեղ պատմության, հարգանքի, համագործակցության և ստեղծագործության ոգին: Թանգարանի արդիականացումն իրականություն դարձավ Վրաստանի կառավարության, ինչպես նաև մասնագիտական շրջանակների և համայնքային ներկայացուցիչների գործակցությամբ: Այդ գործակցության հիմքում ընկած են փոխադարձ հարգանքն ու

մշակութային քաղաքականության համակարգված փոխհամաձայնեցումը: Կարևորել եմ միջոցառումը նաև Հայաստանի և Վրաստանի միջև մշակութային համագործակցության ամրապնդման համատեքստում՝ նշելով, որ համատեղ միջոցառումները խթանում են երկխոսությունը:

Վրաստանի մշակույթի նախարար Թինաթին Ռուխաձեն ևս ողջունել է ներկաներին և կարևորել երկու երկրերի մեջ ձևավորված համագործակցությունը՝ նշելով, որ մշակույթը չունի տարաձայնություններ և առանձնահատկություններ. «Մշակույթը բխում է բոլորի սրտից և կարող է ոգեշնչել բոլորին՝ անկախ ազգությունից և լեզվից»:

Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Սմբատյանի ընդգծմամբ՝ ընդունված է ասել՝ մշակույթը սահմաններ չի ճանաչում՝ առավել ևս հայ և վրացի ժողովուրդների դարավոր բարեկամության համար:

Միջոցառման շրջանակում ծաղիկներ եմ նաև խոնարհել Վահան Տերյանի կիսանդրու մոտ, ապա շրջայց ենք կատարել վերականգնված տուն-թանգարանում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաձայնություն է ձեռք բերվել զարգացնելու կապերը գիտակրթական ու մշակութային կառույցների միջև՝ միաժամանակ իրականացնելով նաև համատեղ ծրագրեր և նախաձեռնություններ:

Ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ կխրախուսվեն երկու երկրների համապատասխան հաստատությունների և կազմակերպությունների միջև տեղեկությունների և մասնագետների փոխանակումը, ինչպես նաև գրականության, թատրոնի, կինեմատոգրաֆիայի, երաժշտության, կերպարվեստի, թանգարանների, գրադարանային գործի, հրատարակչության, հուշարձանների և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության բնագավառներում համագործակցությունը:

Կխրախուսվեն փոխադարձ մասնակցությամբ կազմակերպվող մշակութային միջոցառումները, այդ թվում՝ երաժշտական, ֆիլմերի, պարարվեստի և թատերական փառատոների, մրցույթների և աշխատաժողովների կազմակերպման միջոցով:

Հաշվի առնելով երկրների առաջնահերթությունները՝ կողմերը կհամագործակցեն նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների իրավասության ներքո գտնվող հարցերի, «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի, ինչպես նաև Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի շրջանակում:

Կիրականացվի փորձի փոխանակում ՄԿՈՒ ոլորտում՝ շինարարության և այլ մասնագիտական ուղղություններով:

Մշտական հիմունքներով կազմակերպվեն Հայաստանի և Վրաստանի երիտասարդների մասնակցությամբ ամենամյա համատեղ հավաքներ և ֆորումներ, ինչպես նաև կապահովվի այդ աշխատանքների կազմակերպման զարգացումը:

Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի մշակույթի նախարարության միջև մշակույթի ոլորտում 2025-2027 թվականների համագործակցության մասին» ծրագիրը:

Անդրադարձ կատարելով «Ակադեմիական քաղաք» ռազմավարական նախաձեռնությանը՝ հրավիրել եմ Վրաստանի ԿԳԵ նախարար Գ. Միքանաձեին հոկտեմբերի 20-21-ը Երևանում կայանալիք խորհրդաժողովին, որի շրջանակում նախարարին հնարավորություն կընձեռվի ներկայացնելու Վրաստանի բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում նախատեսվող բարեփոխումները:

Ձեռք է բերվել նաև պայմանավորվածություն Հայաստան հրավիրել Վրաստանի ազգային թանգարանի և պատկերասրահի տնօրեններին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Այցերի ընթացքում երկուստեք առաջարկվել է դիտարկել համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները մշակույթի, կրթության, գիտության և երիտասարդության ոլորտներում, ինչպես նաև փորձի փոխանակման ծրագրեր նախաձեռնելու ուղիները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարար
Ժաննա Անդրեասյան

_____

15.07.2025թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326 Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՎՈ 551-Ա, ՎՈ 576-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Վրաստան (Թբիլիսի, Գանձա)

5. Գործուղման ժամկետները՝ 2025թ. հուլիսի 11-12-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն
որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Ժաննա Անդրեասյան			Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը	Էկոնոմ դաս			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)				
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	74			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28425			28.425
	Օրերի քանակը	1			
	Վճարը 1 օրվա համար (դոլար)	61			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	23431			23.431
	Օրերի քանակը	1			
	Ընդամենը (դրամ)	***51856***			***51.856***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Այլ ծախսեր (.....)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***51.856***			***51.856***

Ծանոթություն: Նախնական վճարվել է 78773 << դրամ, ենթակա է վճարման 0 << դրամ:

Արտարժույթի միջին փոխարժեքն առ 15.07.2025թ.
1 դոլար = 384.12 դրամ

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**